պատերազմեաց ամս բազումս: Յաւուրս սորա շինեցաւ Հաղբատ և Սանահին՝ 'ի թագաւորութեանն Հայոց Աշոտոյ 'ի թըւին Քրիստոսի Ջ.Ձ.Է:

Ռոմանոս՝ եղբօրորդի Կոստանդիանոսի՝ թագաւորեաց ամս չորս: Սա գնաց 'ի պատերազմ յարևելս. և էր ատեցող միաբնակաց. զքաղուսն յԱսորոց եսպան 'ի բանտի. և բարկութիւն Տեառն եղև 'ի վերայ Ռոմանոսի և սատակեցաւ չարաչար մահուամբ: Սա էառ զԿրէտէս կղզին յԵգիպտացւոց՝ սաստիկ պատերազմաւ:

Նիկիֆոռոս թագաւորեաց ամս Է: Յաւուրս սորա օծաւ թագաւոր Հայոց Գագիկ 'ի Վահանայ. որ և դաշն ուխտի հաստատեաց ընդ Վրացիս. որք են կողմանք Կուրճաստանայ և Պաշաչուղայ: Էր Նիկիֆոռոս այր բարի և լի ամենայն առաքինութեամբ: